ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ. Ազատագրական պայքարի ուղիներում, 5 գրքով. *գիրք I, Երևան, «Հայագիտակ», 2003, 816 էջ, գիրք II, Երևան, «Հայագիտակ», 2003, 760 էջ, գիրք III, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 1128 էջ, գիրք IV, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, 1200 էջ, գիրք V, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 1296 էջ:*

Հայոց պատմության քառուղիներում միշտ էլ եղել են վառ անհատականություններ ու նվիրյալներ, որոնք իրենց ազգօգուտ գործունեությամբ անմնացորդ ծառայել և ծառայում են իրենց երկրին ու ժողովրդին՝ լուսավոր հետք թողելով պատմության և մշակույթի անդաստանում: Նման մտավորականներից է ականավոր գիտնական, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը: Նրա կեսդարյա գործունեությունը կապված է Հայաստանի XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակների պատմության ու մշակութային ժառանգության ուսումնասիրությանը:



Հայ պատմագիտական հարուստ ժառանգությունը շահեկանորեն լրացվեց «Ազատագրական պայքարի ուղիներում» աշխատության հինգ հատորով, որի վերջին հատորը լույս տեսավ այս տարի: Այս արժեքավոր հատորները եկան ամբողջացնելու և հարստացնելու XX դարասկզբի ազատագրական պայքարի պատմության առաջին տասնամյակի ամբողջական պատմությունը, մի գործ, որը եթե Հ. Սիմոնյանը հատուկ բարեխղճությամբ և քրտնաջան աշխատանքով չաներ, ապա մեր պատկերացումներն այդ ժամանակի մասին թերի կմնային: Հատորները վերաբերում են 1905–1914 թթ. խոշոր պատմական իրադարձություններով լեցուն ժամանակահատվածին, երբ տեղի ունեցան ռուսական (1905–1907 թթ.), երիտթուրքական (1908 թ.) և պարսկական (1905–1912 թթ.) հեղափոխությունները, որոնց ավերիչ ալիքը տարածվեց նաև մեծ ու փոքր ազգերի, այդ թվում՝ հայերի վրա: Բազմաչարչար մեր ժողովուրդը իր կամքից անկախ հայտնվեց խիստ անբարենպաստ պայմաններում՝ կրելով մարդկային ու նյութական անդառնալի կորուստներ: Հենց այս ժամանակահատվածի ազատագրական պայքարի պատմությունն է քննության առնված Հ. Սիմոնյանի վերոնշյալ աշխատությունում:

«Ազգային պայքարի ուղիներում» գրքի առաջին հատորում, որ ընդգրկում է 1905 հունվարից 1906 թ. օգոստոս ամսիները, համակողմանիորեն քննության են առնված այդ ժամանակահատվածում Հայաստանում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, վերլուծված են Արևելյան և Արևմտյան Հայաստանի պատմական կարևոր դեպքերն ու արվել են արժեքավոր եզրակացություններ: Պատմական փաստերի վերլուծությամբ հեղինակը ներկայացրել է ռուսական հեղափոխության ազդեցությունը արևելահայության վրա, թուրք-հայկական ընդհարումներն ու Անդրկովկասի հայության վիճակը, հայերի կոտորածները Բաքվում և Անդրկովկասի մյուս քաղաքներում, կովկասահայության առաջին համագումարը և այլն: Առանձին գլխով քննարկվել են արևմտահայության անվերջանալի արհավիրքները, սուլթան Համիդ II-ի հայատյաց քաղաքականության հետևանքները և եղելությունները կովկասահայոց կյանքում 1906 թվականին: Գիրքն ունի հավելվածների բաժին և օգտագործված գրականության ցանկ:

Բազմահատորյակի 2-րդ հատորն ընդգրկում է 1906 թ. օգոստոս – 1907 թ. հուլիս ժամանակահատվածը: Այստեղ համապատասխան փաստերի վերլուծությամբ 760 տպագիր էջերում ներկայացված է թուրք-հայկական ընդհարումների ավարտը և

դրանց հետևանքները, հայ սոցիալ-դեմոկրատների գործունեությունը 1905–1907 թթ.-ին, թուրք-քրդական հարստահարումների սաստկացումները Հայաստանում և ինքնապաշտպանական մարտերում, ֆիդայական շարժման մայրամուտը և այլն: Վերլուծելով ռուսական մեծ հեղափոխության արձագանքները Անդրկովկասի սահմանակից երկրներում՝ հեղինակը ցույց է տալիս հայության ծանր վիճակը և կատարում անհրաժեշտ եզրակացություններ:

Գրքի 3-րդ հատորը մի մեծածավալ ուսումնասիրություն է (1128 տպագիր էջ), որ ընդգրկում է 1907 թ. հուլիսից – 1908 թ. ապրիլ ընկած ժամանակամիջոցում հայկական կյանքում տեղի ունեցած իրադարձությունները: Ներկայացվում է կովկասահայության ծանր վիճակը ստոլիպինյան ռեակցիայի սկզբնական շրջանում 1907–1908 թթ., իրավիճակը 1907 թ. Հունիսերեքյան հեղաշրջումից հետո, դատաքննության խնդիրները, Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի և ռուսական կառավարության ղեկավար Պ. Ստոլիպինի թշնամական վերաբերմունքը հայության և ՀՅԴ-ի նկատմամբ: Պատմական համապատասխան փաստերի համակողմանի վերլուծությամբ ցույց է տրվում օսմանյան ընդդիմադիր ուժերի առաջին և երկրորդ համաժողովների որոշումները, երիտթուրքերի հետ ՀՅԴ-ի համագործակցության պայմաններն ու խնդիրները և հնչակյանների առաջարկների մերժումը, ինչպես նաև հնչակյան ու վերակազմյալ հնչակյան կուսակցությունների միջև դաշինքի ստեղծումը:

Աշխատության երկրորդ մասում հեղինակը հանգամանորեն քննարկում է Պարսկաստանի սահմանադրական շարժման վերաճումը հակամիապետական ապստամբության, անգլո-ռուսական համաձայնությունը և Պարսկաստանին վերաբերող խնդիրները, տարաբնույթ փաստերի համեմատական վերլուծությամբ ներկայացնում է Պարսկաստանում սկսված դեմոկրատական հեղափոխությունը և Թուրքիայի թևակոխումը նախահեղափոխական շրջան: Գրքում անդրադարձ է կատարվում հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի գործունեության վերջին շրջանին 1906–1907 թթ.: Նկարագրվում է արևմտահայության ծանր վիճակը երիտթուրքական հեղաշրջումից հետո, Իթթիհադի անհարդուրժողականության նախնական դրսևորումները, օսմանյան պառլամենտի ընտրությունները, կազմը, գործունեության սկիզբը, աբդուլհամիդյան զինված հեղաշրջման փորձը և հայության հետ դրա առնչությունները, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծման պատմությունը: Պատմական համապատասխան նյութերի վերլուծության հիման վրա հեղինակը անում է կարևոր եզրակացություն, որ երիտթուրքերի քաղաքականությունը շարունակությունն էր սուլթան Աբդուլ Համիդի ցեղասպան քաղաքականության, որի արդյունքը կիլիկիահայության 1909 թ. ջարդերն էին: Գրքի վերջում բերված են հավելվածներ, որոնք պարունակում են աղբյուրագիտական տարաբնույթ նյութեր:

1200 տպագիր էջ պարունակող գրքի 4-րդ հատորում համակողմանիորեն քննության են առնված և պատմական համապատասխան փաստերի մանրակրկիտ վերլուծությամբ ներկայացված են 1909–1911 թթ. Արևելյան ու Արևմտյան Հայաստանում կատարվող պատմական իրողությունները, որոնք հայությանը կանգնեցրին նոր փորձությունների և մարտահրավերների առաջ: Պատմական փաստերի համադրմամբ ու վերլուծությամբ հեղինակը բացահայտել է թուրքահայոց կյանքում տվյալ ժամանակահատվածում տեղի ունեցած դեպքերը, Կիլիկիայի մեծ աղետը, կիլիկիահայության ջարդերի պատճառներն ու դասերը, 1908 թ. հոկտեմբերին Էջմիածնում կազմակերպված հայոց կաթողիկոսի ընտրություններն ու դրանց հետևանքները, պարսկական հեղափոխության անկասելի ընթացքն ու Մահմեդ Ալի Շահի գահընկեցությունը, հայության ընդգրկվածությունն ու մասնակցությունը այդ գործընթացներին, ռազմական գործողություններին, պարսկական հեղափոխության մեջ Եփրեմի ունեցած դերակատարությունը, հեղափոխության հետևանքները: Հ. Սիմոնյանն անհրաժեշտ փաստերով ներկայացրել է կովկասահայության տագնապները, ներքին կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը, երբ աստիճանաբար

ի հայտ էին գալիս դրական միտումներ, որոնք, սակայն, ամեն անգամ խամրում էին ստոլիպինյան ռեակցիայի նորանոր հարվածների տակ, անդրադարձ է կատարում ՀՅԴ-ի դեմ հարուցված քրեական գործերի մանրամասներին, Պետերբուրգյան դատավարությանը, հայ իրականության մեջ գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությանը, Չորրորդ պետական դումայի ընտրություններին:

Առանձին գլխում հանգամանորեն վերլուծվում են պարսկական հեղափոխության պարտության պատճառներն ու հետևանքները հայության համար, Եփրեմի կամավոր պաշտոնաթողության պատճառները և այլն: Միաժամանակ բացահայտվում են պանթուրքիզմի իբրև գաղափարախոսության բովանդակությունը և այն գործողության մեջ դնելու պատճառները, դաշնակցության կապերի խզումը Իթթիհադի հետ, Իթթիհադի կառավարության տապալումն ու Իթթիլաֆի անցումը Թուրքիայի իշխանության դեկին: Ցույց են տրվում այդ երկու ուժերի ընդհանուր քաղաքական նպատակներն ու խնդիրները, հայ ժողովրդի հարցում նույն քաղաքականության իրականացման մանրամասները:

Մեծածավալ և արժեքավոր գրքի 5-րդ հատորում ներկայացված է 1912 թ. հոկտեմբերից 1914 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում հայկական հարցի վերաբացման պատմությունը: Ուսումնասիրությունը գալիս է լրացնելու այդ բնագավառում առկա բացը և նոր լույս սփռում կարևոր մի շարք հարցերի վրա, որոնք խիստ արդիական են և այսօր կարիք ունեն խորքային վերլուծության ու սթափ գնահատության: Հեղինակը փորձառու գիտնականի հմտությամբ և գիտատեսական բարձր մակարդակով վեր է հանել հետազոտվող չափազանց բարդ ժամանակաշրջանում մեր ժողովրդին հուզող հայկական հարցի լուծման հետ կապված բոլոր տարբերակները՝ կարևոր պատմաէջերը, հասարակության տարբեր խավերի, եվրոպական երկրների մոտեցումներն այս հիմնահարցին և արել կարևոր եզրահանգումներ:

Խիստ լայն է գրախոսվող աշխատության աղբյուրագիտական բազան: Ակադեմիկոս Հ. Սիմոնյանի կողմից օգտագործված Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Ա. Չոպանյանի, Ա. Գարագաշյանի, Գ. Զոհրապի, Զ. Եսայանի, Մ. Կյուրճյանի, Միամանթոյի, Վ. Մալեզյանի անձնական ֆոնդերի, Վրաստանի ազգային արխիվի, ռուսական արխիվների, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի կաթողիկոսական դիվանի, Ա. Ալպոյաճյանի, Մ. Իզմիրլյանի անձնական ֆոնդերի և արխիվային ահռելի չափերի հասնող նյութերի, փաստաթղթերի հիման վրա արված վերլուծությունները վկայում են նրա եռանդուն աշխատասիրության, խոր եզրահանգումներ կատարելու բացառիկ ունակությունների մասին: Պարզապես զարմանալ կարելի է, թե ինչպիսի նվիրումով է հեղինակը կարողացել այդչափ ծավալուն և տարողունակ նյութը համակարգել ու վերլուծել՝ նորովի մոտենալով քննարկվող հիմնախնդրին, վերահմաստավորել դրանք և վերագնահատել պատմաքաղաքական տարբեր իրադարձություններին նախկինում տրված գնահատականները: Աշխատանքի գլխավոր արժանիքներից է այն, որ առաջին անգամ հայ պատմաքաղաքական գրականության մեջ համեմատական հետազոտության պատմաքննական մեթոդով նա համադրել է հայկական հարցի անցյալի պատմությունը հաջորդող պատմաշրջանի հետ, բացահայտել նրա վերաբացման պատճառներն ու դժվարին վերընթացը, Ռուսաստանի աջակցությամբ հիմնահարցի օրակարգ մտնելը Եվրոպայում և թուրքական հակազդեցությունը:

Հեղինակն անհրաժեշտ փաստերի վերլուծությամբ ցույց է տալիս 1912 թ. հայկական հարցի վերաբացման գործում Գևորգ V Սուրենյանց կաթողիկոսի, Գևորգյան ճեմարանի դասախոս, կրոնական և հասարակական նշանավոր գործիչ, ականավոր հայագետ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, մեծ հայասեր, ազգային բարերար, եգիպտահայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Պողոս Նուբար փաշայի դերը, հայ ազգային կուսակցությունների գործունեությունն այդ ուղղությամբ, ինչպես նաև հայոց ազգային պատվիրակութ-

յան մարտավարությունը 1912 և 1913 թթ. հայկական հարցի խնդրում եվրոպական երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ու Ռուսաստանի արտգործնախարարության և դիվանագետների հետ քննարկումների ընթացքում:

Ակադեմիկոս Հ. Սիմոնյանը բազմաթիվ փաստաթղթերի վերլուծությամբ բացահայտում է թուրքական կառավարությունների վերաբերմունքը հայկական հարցում, հայերին Եվրոպայից հեռու պահելու և հերթական անգամ սիրաշահելու կեղծավորությամբ այն թաղելու մտադրություններն ու գործունեությունը:

Առաջին անգամ օգտագործելով նորահայտ բազմաթիվ փաստեր՝ հեղինակը հանգամանորեն անդրադառնում է հայկական հարցի քննարկումներին Պետերբուրգի հայկական խմբակում, վերլուծում է հայկական բարենորոգումների տարբեր ծրագրերի բովանդակությունը, անհրաժեշտ է համարում միասնական ծրագրի ստեղծման կարևորությունը և ռուսական կառավարությանն այն մատուցելը:

Հեղինակին հաջողվել է համոզիչ փաստարկներով ներկայացնել հայկական հարցը մեծ տերությունների դիվանագիտական պայքարի հորձանուտում, ցույց տալ, թե ինչպես պատերազմին նախապատրաստվող եվրոպական պետությունները հայկական հարցը քննարկում էին իրենց շահերից ելնելով: Ներկայացվում է ռուս-գերմանական սեպտեմբերյան համաձայնագիրը, բանակցությունները արտգործնախարար Ս. Դ. Սազոնովի հետ և այդ խնդրի կենսագործման ոլորտում Պետերբուրգի կողմից շահագրգռվածության պատճառներն ու բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը և նրա քննական վերլուծությունը, պետությունների պաշտոնական շրջանակների գնահատականը և վերատեսուչների որոնումներն ու նշանակումը իրենց պաշտոններում: Հ. Սիմոնյանը վերջում ներկայացնում է հայկական հարցի նոր ճգնաժամը և տապալման պատճառները՝ գրելով, որ «Սկիզբ առած բարի գործն անսպասելի բռնկված համաշխարհային պատերազմի պատճառով հակառակ արդյունք տվեց: Հայ ժողովրդի բարեկամների անկեղծ ճիգերը, ռուսական դիվանագիտության ավելի քան մեկուկես տարի տևած հայապաշտպան հետևողական ջանքերը ցանկալի շարունակություն չունեցան: Երիտթուրքական կառավարությունը օգտվելով հարմար պահից, որոշեց օրակարգից ընդմիշտ ջնջել հայկական հարցը՝ կատարելով մարդկային պատմության մեջ եզակի հանցագործություններից մեկը: Հայոց ոստանում ծայր առավ բարբարոսական անզուսպ խրախճանք: Թուրքն ու քուրդը տեր դարձան հայ ժողովրդի հայրենիքին» (հ. 5, էջ 1102):

Հավելվածներում տրված են Օսմանյան կայսրության վարչական բաժանումները 1906–1907 և 1911–1912 թթ., Հայաստանի բարենորոգումների համար առաջարկված բոլոր նախագծերն իրենց հոդվածներով, ռուսական արխիվում պահպանված անհայտ հեղինակի կազմած նախագիծն ու 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի բնօրինակը, ինչպես նաև ժամանակին հայկական մամուլում տեղ գտած հետագա ուսումնասիրողների համար կարևոր նյութեր, որոնք չեն օգտագործվել հեղինակի կողմից՝ հետագա ուսումնասիրողներին օգնելու նպատակով:

Այսպիսով, ակադեմիկոս Հ. Սիմոնյանի մեծածավալ աշխատությունը նշանակալի երևույթ է XX դարասկզբի հայոց պատմության ուսումնասիրության բնագավառում, հայագիտության մեջ ընդհանրապես, քանզի հանգամանորեն քննարկված է այդ շրջանի հայոց ամբողջական պատմությունը և կատարված են համապատասխան պատմական դասերի վերլուծություններ ու ընդհանրացումներ:

Հեղինակի օգտագործված փաստավավերագրական նյութերը, որոնց մեծ մասը առաջին անգամ են շրջանառության մեջ մտնում, աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ունեն և պարունակում են գիտական նորույթ:

Հատորները արժևորվում են նաև հեղինակի կողմից պատմական փաստերի վերլուծությունների հիման վրա կատարված ինքնուրույն դատողություններով ու անհրաժեշտ առաջարկներով, որոնք խիստ արդիական են և ունեն քաղաքական կարևոր

նշանակություն մեր օրերի համար՝ հատկապես պատմությունից դասեր քաղելու առումով:

Աշխատությունը, որ կատարվել է հեղինակին բնորոշ բարեխղճությամբ, բծախնդրությամբ և գիտական բարձր պատասխանատվությամբ, մեծ ներդրում է ոչ միայն պատմագրության, այլև հայագիտության ոլորտում:

Լինելով գիտական բացառիկ ունակություններով, բազմակողմանի զարգացվածությամբ, նախաձեռնող, պրպտող ու ստեղծագործող, վերլուծական կարողություններով և միանգամայն ինքնուրույն դատողություններով օժտված անձնավորություն՝ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանն իր հատորներով լրացրեց ու ամբողջացրեց հայագիտության, մասնավորապես XX դարասկզբի ազատագրական պայքարի պատմության մեջ գոյություն ունեցող բացը:

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ